

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 24

### ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

01.10.2018թ.

ք.Վանաձոր

#### Մասնակցում էին

- Ա.Խաչատրյանը - մարզպետի տեղակալ  
Ա.Ղուկասյանը - մարզպետի տեղակալ  
Ս.Սարուխանյանը - մարզպետի տեղակալ  
Ն.Սարգսյանը - գլխավոր քարտուղար  
Վ.Խաչատրյանը - գլխավոր քարտուղարի տեղակալ  
Ա.Բեջանյանը, Լ.Վարդանյանը, Ա.Մատինյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերդյանը, Գ.Բաղդասարյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Աղլոյանը, Հ.Մկրտչյանը, Ն.Համբարձումյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ  
Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական  
Հ.Ղամբարյանը - մարզպետի խորհրդական  
Մ.Կիրակոսյանը - մարզպետի օգնական  
Գ.Սաղաթեյանը -մարզպետի օգնական

#### Օր ա կ ա ր գ ու մ`

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին /Ձեկ. Ն Սարգսյանը/  
2. Պետական գերատեսչությունների կողմից տրված հանձնարարականների մասին /Ձեկ.Ա.Խաչատրյանը, Ա.Ղուկասյանը, Ս.Սարուխանյանը/  
3. «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարչից գույք ընդունելու մասին /Ձեկ.Լ.Ասլանյանը/  
4. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին /Ձեկ.Ա Բեջանյանը/  
5. Մարզում իրականացվող սուբվենցիոն ծրագրերի ընթացքի մասին /Ձեկ.Հ.Մկրտչյանը/  
6. Գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքի մասին /Ձեկ.Գ.Հակոբյանը/  
7. Այլ հարցեր:

## Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

**1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Խաչատրյանին, Ա.Ղուկասյանին, Ս.Սարուխանյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանին և ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝**

Ամենօրյա շարունակական աշխատանքներ իրականացնել մարզի համայնքների ղեկավարների հետ սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը բարձրացնելու և պլանային առաջադրանքները կատարելու նպատատակով:

**2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանին՝**

Համայնքների ղեկավարներից պահանջել և ստանալ տեղեկատվություն համայնքներում հարկային պարտավորություններ ունեցող այն անձանց վերաբերյալ, ովքեր համարվում են պետական, համայնքային և մասնավոր ու այլ հատվածի աշխատակիցներ, դրանք քննարկել փոխմարզպետների և շահագրգիռ ստորաբաժանումների հետ ու ներկայացնել առաջարկություններ պարտավորությունների կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների վերաբերյալ:

**3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին՝**

Ամփոփել և 15-օրյա ժամկետում ներկայացնել մարզում բերքահավաքի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև առաջարկություններ աշնանացանի իրականացման վերաբերյալ:

01/10/2018

X 

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ